ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"25" հոկտեմբերի 2024թ. N 2559-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ՈՐՈՇ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՓՈԽԱԴՐՈՂՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1010-Ն որոշման հավելվածի 16-րդ կետով և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետությունում գրանցված որոշ օդանավ շահագործողների կողմից ներկայացված հայտերը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության բոլոր կետերից դեպի Եվրոպական միության բոլոր կետեր կանոնավոր փոխադրողներ (այսուհետ՝ Փոխադրողներ) նշանակել ստորև նշված ավիաընկերություններին.

1) «Հայկական Ավիաուղիներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը.
2) «Շիրակ Ավիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը.
3) «Ֆլայուան Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը
4) «ԱՐՄԵՆԻԱ» Էյրվեյզ» փակ բաժնետիրական ընկերությանը.

5) «Հայվեյզ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը.

2. Օդային տրանսպորտի քաղաքականության և թռիչքների թույլտվությունների վարչության պետին՝ ապահովել հրամանի օրինակի տրամադրումը Փոխադրողներին և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեին արձակման օրվանից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի մամուլի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքում:

10/25/2024

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL :7106b0069 Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Երևան